ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՍՍՀՄ-ի՝ որպես միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի, սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր պահանջներից է տարբեր հանրապետությունների ու մարզերի միջև տնտեսական ու մշակութային կապերի ընդլայնումը։ ՍՍՀՄ-ը բազմազգ երկիր է, ուստի այդ կապերի ընդլայնումը ենթադրում է նաև տարբեր ազգության մարդկանց միջև համագործակցության զարգացում, շփման ոլորտի ընդլայնում և ինտենսիվացում։ Քանի որ համատեղ գործունեության հաջող ընթացքը մեծապես պայմանավորվում է մարդկանց միջև ստեղծված հարաբերություններով, ուստի գործնական մեծ նշանակություն է ձեռք բերում այդ հարաբերությունների գիտական ուսումնասիրումը։ Ազգային հարաբերությունների ուսումնասիրումը կարևոր է նաև ՍՄԿԿ-ի գաղափարական աշխատանքի գիտական կազմակերպման համար։ Ինչպես նշվել է ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումում, «100-ից ավելի ազգերի և ազգությունների միավորող մեր երկրի պայմաններում գաղափարախոսական աշխատանքը անհրաժեշտ է առանց նրանց յուրահատուկ շահերի, ազգային հոգեբանության և մշակույթի առանձնահատկությունների ուշադիր ուսումնասիրման»[1]։

Ազգամիջյան հարաբերությունների սոցիոլոգիական ուսումնասիրման կիրառական արժեքի բարձրացումը մեծապես կախված է նյութի վիճակագրական մշակման տեխնիկայի կատարելագործումից։ Հետազոտության վերջնական արդյունքի հավաստիությունը պայմանավորվում է նյութի վիճակագրական մշակման ճիշտ մեթոդների ընտրությամբ։ Այդ իսկ պատճառով կարևոր է ազգամիջյան հարաբերությունների կոնկրետ սոցիոլոգիական ուսումնասիրման մեթոդիկայի ուսումնասիրումը։ Սույն հոդվածի նպատակն է ազգամիջյան հարաբերությունների կարևոր ցուցիչների թվին դասվող ազգամիջյան դիրքորոշումների չափման հետ կապված մի շարք հարցերի քննումը, որը կարևոր է ինչպես կոնկրետ սոցիոլոգիայի, այնպես էլ ընդհանուր և սոցիալական հոգեբանության, ազգագրության և գիտական այլ բնագավառների համար։

Դիրքորոշումը դա սուբյեկտի ակտիվության պատրաստի վիճակն է[2]։ Իբրև միջանձնային ազգային հարաբերությունների ցուցիչներ ընդունվում են խառը ազգային կոլեկտիվի, խառը ազգային ամուսնությունների, ոչ ֆորմալ շփման (ընկերական, հարևանական և այլ կարգի շփում) նկատմամբ դիրքորոշումները, որոնց միջոցով բացահայտվում է, թե անձը ցանկանո՞ւմ է արդյոք գործունեության այլ ոլորտներում շփվել այլազգի անձնավորության հետ։ Դիրքորոշումների չափման համար սոցիոլոգիայում կիրառվում է սանդղակավորման մեթոդը։ Ազգամիջյան դիրքորոշումների չափումների համար, մասնավորապես, օգտագործվում է ամերիկյան գիտնական Ե. Բոգարդուսի սոցիալական հեռավորության կարգային սանդղակը, որը ստեղծվել է 1925 թ.։ Այս կամ այն չափով օգտագործելով այդ սանդղակի հիմնական գաղափարը, սովետա-

---

1 *«ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը», 14—15 հունիսի 1983 թ., Երևան, 1983, էջ 66։*

2 А. С. Прангишвили, Общепсихологическая теория установки («Психологическая наука в СССР», М., 1960, с. 137).

կան գիտնականները կառուցում են «ընդունելիության սանդղակներ» (шкалы приемлемости), որոնք հաջողությամբ կիրառվում են տարբեր կարգի կոլեկտիվներում՝ մարդկանց միջև ստեղծված հարաբերություններն ուսումնասիրելու համար[3]։ Բոգարդուսի սոցիալական հեռավորության կարգային սանդղակը նախատեսված է պարզելու այլ ազգության կամ ռասայի ներկայացուցիչներին հանդուրժելու աստիճանը։ Այդ նպատակով հարց է տրվում. ցանկանո՞ւմ է արդյոք անձը ունենալ ռասայի կամ ազգության պատկանող անձանց թվից ունենալ՝ 1) մոտ անձնավորություն ամուսնական ոլորտում, 2) ընկերներ իր ակումբում, 3) որպես բնակիչներ իրենց փողոցում, 4) աշխատավայրում, 5) իր երկրի քաղաքացի, 6) որպես միայն հովնկներ[4]։ Ենթադրվում է, որ շփման այս ոլորտները մտերմության տարբեր աստիճան ունեն և այդ աստիճանը առավել բարձր է առաջին՝ ամուսնական ոլորտում և հաջորդաբար նվազում է մյուս ոլորտներում մինչև բացարձակ ժխտումը։ Միևնույն ժամանակ նշվում է, որ եթե հարցվողը ցանկանում է շփվել այլ ազգի անձնավորության հետ ամուսնական ոլորտում, ապա նա դրական դիրքորոշում կունենա նաև մյուս բոլոր ոլորտներում։ Իսկ եթե նա դրական դիրքորոշում ունի ակումբում ընկերներ ունենալու նկատմամբ, ապա կարող է բացասական դիրքորոշում ունենալ միայն ամուսնության ոլորտում շփվելու նկատմամբ, մյուս բոլոր ոլորտներում նա կունենա դրական դիրքորոշում։ Եվ այսպես շարունակ մտերմության աստիճանի նվազմանը զուգընթաց հարցվողը վերից վար հաջորդականությամբ մեկ կետ պակաս է ընդգծում։ Ընդհանուր առմամբ, հիշյալ սանդղակում դասավորված դիրքորոշումների հաջորդականությունը ուսումնասիրությունների մեծ մասում չի խախտվում։ Սակայն որոշ հետազոտություններում դիրքորոշումների հաջորդականությունը միշտ չէ, որ համապատասխանում է նշված կարգին։ Օրինակ, որոշ հարցվողներ, որոնք դեմ էին պուերտոռիկացիների հետ հարևանություն անելու նույն փողոցում, դեմ չէին նրանց հետ ակումբում շփվելու[5]։

Սովետական էթնոսոցիոլոգ Ա. Ա. Սուսոկոլովը Քիշինև քաղաքի էթնոսոցիոլոգիական հետազոտման նյութերի մշակման ընթացքում բացահայտեց, որ ազգամիջյան ամուսնությունների և խառը ազգային կոլեկտիվի նկատմամբ դիրքորոշումների կարգը որոշ դեպքերում չի համապատասխանում սանդղակի կառուցման գաղափարին[6]։ «ՍՍՀՄ ազգերի զարգացման և մերձեցման սոցիալ-մշակութային պայմանների օպտիմիզացիա» համամիութենական ծրագրով (հեղինակ՝ Յու. Վ. Հարությունյան)[7] Հայկական ՍՍՀ-ում կատարված էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս, որ որոշ հարցվողների ազգամիջյան դիրքորոշումների հաջորդականությունը չի համապատասխանում սանդղակին[8]։ Սակայն հարկ է նշել, որ այդ ծրագիրն ընդհանուր բնույթի նպատակներ է հետապնդում և այնտեղ ազգամիջյան հարաբերություններն արտացոլող դիրքորոշումներից տեղ են գտել միայն խառը ազ-

[3] Н. В. Бахарева, Шкала приемлемости как метод исследования взаимоотношений («Человек и общество», вып. VII, Л., 1970); её же, Особенности взаимоотношений в управленческих коллективах («Человек и общество», вып. VIII, Л., 1971, с. 91—92).

[4] М. И. Зайцева, Методы шкалирования при измерении установки («Социальные исследования», вып. 5, М., 1970); Р. Пэнто, М. Гравитц, Методы социальных наук, М., 1972, с. 500.

[5] М. И. Зайцева, նշվ. աշխ. էջ 231։

[6] А. А. Сусоколов, Непосредственное межэтническое общение и установки на межличностные контакты («Советская этнография» (այսուհետև՝ СЭ), 1973, № 5).

[7] Ծրագրի մասին մանրամասն տե՛ս Ю. В. Арутюнян, Социально-культурные аспекты развития и сближения наций в СССР (Программа, методика и перспективы исследования, «СЭ», 1972, № 3).

[8] Հայաստանում հետազոտություններն իրականացվել են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի կողմից՝ է. Տ. Կարապետյանի ղեկավարությամբ։ Կատարվել է բնակավայրերի բազմաստիճան ընտրություն։ Հարցումները կատարվել են ըստ բնակության վայրի։ Ստացված նյութը ներկայացուցչական է տվյալ բնակավայրի տարբեր

գային կոլեկտիվի և ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ դիրքորոշումները։ Այդ իսկ պատճառով մենք հավակնություն չունենք շոշափել Բոգարդուսի սանդղակի հետ կապված բոլոր վիճելի հարցերը և տալ դրա ամբողջական գնահատականը, այլ կանդրադառնանք միայն վերոհիշյալ երկու դիրքորոշումների հարաբերակցությանը և այդ սանդղակի կիրառման հնարավորություններին։

Նյութի քննման համար կարևոր է դիրքորոշումների վերաբերյալ անձանց պատասխանների հնարավոր տարբերակների առանձնացումը։ Մենք ունենք երկու դիրքորոշում, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել դրական կամ բացասական։ Հետևաբար, հնարավոր է պատասխանների չորս տարբերակ (տե՛ս սխեման)։

	1	2
I	+	+
II	+	—
III	—	+
IV	—	—

Ազգամիջյան դիրքորոշումների վերաբերյալ պատասխանների հնարավոր տարբերակների կառուցվածքը. 1. ազգամիջյան ամուսնության նկատմամբ դիրքորոշում, 2. խառը ազգային կոլեկտիվի նկատմամբ դիրքորոշում (I—IV հնարավոր պատասխանների տարբերակներն են)։

Ըստ հիշյալ սանդղակի կառուցման դաղափարի հնարավոր են I, III և IV տարբերակները, իսկ II-ը բացառվում է։ Սակայն, ինչպես ցույց են տալիս նյութերը, այդպիսի տարբերակ հնարավոր է։ Այս կարգի հարցվողների թիվը Երևանի, Քիշինևի, Կալինինոյի և Եղեգնաձորի համար կազմում է ընտրության համապատասխանաբար 1,7, 8,0, 8,1 և 4,2 %-ը[9]։ Այս փաստն արդեն իսկ վկայում է, որ Բոգարդուսի սանդղակը ունիվերսալ չէ և սոցիոլոգիական նյութի մշակման համար այն պետք է զգուշորեն օգտագործվի։

Որո՞նք են դիրքորոշումների հակասության պատճառները։ Առավել կարևոր պատճառների թվում կարելի է նշել սոցիալական ընկալման բարդ պրոցեսի մի շարք մեխանիզմների, հատկապես անձի կողմից այլ խմբի ընկալման առանձնահատկությունների անտեսումը։ Այսպես, Բոգարդուսի հարցաթերթիկում պահանջվում է, որ հարցվողը հարցերին պատասխանելիս նկատի ունենա տվյալ ռասայի կամ ազգության միջին անդամին, տվյալ ռասան կամ ազգությունը ամբողջությամբ և նկատի չունենա այն անհատներին, որոնց նա հնարավորություն է ունեցել անձամբ գնահատելու։ Այս պահանջը նախատեսված է չեզոքացնելու հարցման արդյունքների վրա տվյալ ազգության առանձին անդամների մասին եղած կարծիքը, որը կարող է տարբեր լինել այդ ազգության մասին ամբողջական պատկերացումներից։ Եվ իրոք, ազգամիջյան հարաբերություններին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տալիս,

---

սոցիալ-մասնագիտական, սեռատարիքային և այլ կարգի խմբերի համար։ Ընտրության մասին մանրամասն տե՛ս «Социальное и национальное», М., 1973, с. 316—318. Ներկա հոդվածում կօգտագործվեն Քիշինևի և Հայկական ՍՍՀ մի քանի բնակավայրերի՝ Երևանի, Կալինինոյի և Եղեգնաձորի էթնոսոցիոլոգիական հետազոտման նյութերը։ Երևանում հարցվել է չորս 2000 մարդ. Կալինինոյում՝ 342, Եղեգնաձորում՝ 290։

9 Քիշինևի էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերը մեզ տրամադրել է Ա. Ա. Սուսոկոլովը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

որ շատ հաճախ անձը բացասական կարծիք ունենալով հանդերձ որևէ էթնիկ ընդհանրության մասին ամբողջությամբ, դրական կարծիք է ունենում այդ ընդհանրության որոշ ներկայացուցիչների մասին և համարում է դա բացառություն[10]։ Դա վկայում է, որ հիշյալ սանդղակի հիմքում ընկած է այլ էթնիկ ընդհանրության մասին ամբողջական պատկերացումը կամ այդ ընդհանրության անդամների ամբողջացված, սխեմայացված կերպարը, այսինքն՝ էթնիկ ստերեոտիպը, որը լայնորեն ուսումնասիրում է սոցիալական հոգեբանությունը՝ մարդու կողմից մարդու ճանաչման պրոբլեմի շրջանակներում։ Սոցիալական հեռավորության սանդղակը ստեղծվելիս (1925 թ.) միջանձնային ընկալման շատ հարցեր դեռևս ուսումնասիրված չէին. հետևաբար, սանդղակում տեղ գտած այդ թերությունը կարելի է բացատրել իր ժամանակի հոգեբանական գիտության զարգացման մակարդակով։

Ինչպես ցույց են տալիս սովետական և արտասահմանյան գիտնականների ուսումնասիրությունները, մարդու կողմից այլ խմբի և մարդու կողմից մարդու ընկալման պրոցեսների վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնք կոնկրետ սոցիալական միջավայրերում կարող են տարբեր դրսևորումներ ունենալ։ Էթնիկ ընդհանրության մասին պատկերացումների վրա մեծ ազդեցություն է գործում միջավայրի էթնիկական կազմը։ Քննվող բնակավայրերը իրարից տարբերվում են էթնիկական կազմով և հետաքրքիր է, որ ազգամիջյան դիրքորոշումների «անհամաձայնությունը» առավել ցայտուն է դրսևորվում խառը ազգային կազմ ունեցող Քիշինևում և Կալինինոյում[11]։ Այդ բնակավայրերում ազգամիջյան ինտենսիվ շփում է ենթադրվում, որի ժամանակ այլ ազգի մասին առավել բազմակողմանի պատկերացումներ են առաջանում։ Տարբեր ազգության մարդիկ ամեն օր շփվում են գործունեության բազմաթիվ ոլորտներում՝ աշխատանքում, հանգստի ժամանակ, ոչ ֆորմալ շփման ոլորտում և այլն։ Իսկ ինչպես ցույց են տալիս սոցիալ-հոգեբանական հետազոտությունները, գործունեության և շփման տարբեր ոլորտներում ընկալվում են անձի որոշակի կողմեր և ստվերում են մնում մյուս հատկանիշները[12]։ Հետևաբար, միջանձնային ընկալումը պայմանավորվում է կոնկրետ շփման ոլորտներով։ Խառը ազգային կազմ ունեցող բնակավայրերում, որտեղ ազգամիջյան շփման ոլորտները մեծ թիվ են կազմում, հնարավոր է ազգի մասին դիֆերենցված պատկերացումների առաջացումը։ Օրինակ՝ անձը կարող է տարբեր գրնահատականներ տալ այլ ազգության ներկայացուցիչների աշխատանքային, զաղափարական, բարոյաէթիկական, գեղագիտական, հոգեբանական և այլ հատկանիշների։ Եվ այդ ամենի ընդհանրացման միջոցով կարող են առաջանալ այլ ազգերի մասին պատկերացումները։ Սա հաստատվում է նաև կոնկրետ սոցիոլոգիական նյութով։ Այլ ազգերի մասին որոշ հարցվողների ընդհանրացված պատկերացումներում դրական և բացասական գծերը հանդես են գալիս համատեղ։ Սա հիմք է տալիս ենթադրելու, որ ազգամիջյան դիրքորոշումների «հակասության» պատճառներից է այլ ազգերի մասին դիֆերենցված պատկերացումը, որտեղ տարբեր արժեքավորում ունեն աշխատանքային և ընտանեկան կենցաղին վերաբերող հատկանիշները։ Անձի այս երկու կողմերի ընկալման պրոցեսներն, իրենց հերթին, պայմանավորվում են տարբեր կարգի գործոններով։ Առաջինի վրա ազդում են սոցիալական գործոնները, օրինակ՝ աշխատանքային կոլեկտիվի մեծությունը[13], արտադրության բնույթը, աշխատանքի պայմանները, աշխատանքից և աշխատավարձից բավարարվածությու-

---

10 Այդ մասին մանրամասն տե՛ս И. С. Кон, Психология предрассудка (О социально-психологических корнях этнических предубеждений, «Новый мир», 1966, № 9).

11 Հետաքրքիր է, որ բազմազգ է Նեղնմաձորի շրջանի բնակչությունը։

12 А. А. Бодалёв, Формирование понятия о другом человеке как личности., Л., 1970; его же, Восприятие и понимание человека человеком, М., 1982.

13 В. И. Паниотто, Структура межличностных отношений, Киев, 1975, с. 4.

նր, սոցիալական առաջընթացի հեռանկարները և հոգեբանական գործոնները՝ հատկապես միջխմբային դինամիկայի հետ կապված հարաբերությունները։ Երկրորդ դիրքորոշման վրա հիմնականում ազդում են կենցաղամշակութային և բարոյաէթիկական գործոնները։ Այսպիսով, խառը ազգային կազմ ունեցող բնակավայրերում այլ ազգի մասին պատկերացումների առաջացման վրա ազդում են մեծ թվով գործոններ, իսկ այդ ամենը հանգեցնում է դիֆերենցված պատկերացումների ձևավորմանը։ Այդ պատկերացումներում ազգի կենցաղամշակութային ու աշխատանքային գծերի արժեքավորումները կարող են տարբեր լինել, որը և Բոգարդուսի սանդղակի շեղումների պատճառն է։

Միատարր ազգային կազմ ունեցող բնակավայրերում, ազգամիջյան շփման ոլորտների սահմանափակության հետևանքով, այլ ազգի մասին պատկերացումների ծավալը փոքր է լինում և սակավ դիֆերենցված, ուստի դիրքորոշումները հանդես են գալիս միասնական ձևով։

Հարկ է նշել նաև, որ հիշյալ սանդղակի միջոցով ազգամիջյան դիրքորոշումների ուսումնասիրումը որոշ անհարմարություններ է առաջացնում։ Սոցիալական կարևոր նշանակություն ունեցող դիրքորոշումների դասակարգումը մեկ սանդղակում զրկում է ուսումնասիրողին այդ դիրքորոշումները առանձին-առանձին վերլուծելու հնարավորությունից։ Իսկ ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական նյութերը, դիրքորոշումների վրա ազդում են մեծ թվով գործոններ, և այդ ազդեցության բնույթը տարբեր սոցիալական միջավայրերում տարբեր է լինում[14]*։*

Ազգամիջյան դիրքորոշումների ուսումնասիրման առավել արդյունավետ ուղի է ազգային կողմնորոշումների բացահայտումը, որը բնորոշվում է որպես կյանքի տարբեր բնագավառներում ազգամիջյան կոնտակտներին, մշակութային փոխազդեցությանը և այլ ոլորտներին առնչվող փոխկապակցված դիրքորոշումների սիստեմ[15]*։ Կողմնորոշումների մեջ են ընդգրկվում ոչ միայն միջանձնային դիրքորոշումները, այլ նաև ժողովուրդների հոգևոր ու նյութական մշակույթի տարրերի, նրանց արժեքների սիստեմների և գործունեության ընդունված ձևերի նկատմամբ դիրքորոշումները*[16]*։ Ճիշտ է, ազգամիջյան կողմնորոշումների սիստեմի մշակման գործում դեռևս կան չլուծված խնդիրներ, սակայն կատարված հետազոտությունները ի հայտ են բերում ազգամիջյան հարաբերությունների այդ ճանապարհով ուսումնասիրման առավելությունները։*

К ВОПРОСУ О МЕТОДИКЕ ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ МЕЖЛИЧНОСТНЫХ НАЦИОНАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ

РУБЕН ОГАНДЖАНЯН

Резюме

В социологии и социальной психологии для измерения межличностных национальных отношений применяется порядковая шкала социальной дистанции Е. Богардуса, которая является одной из разновидностей кумулятивных шкал. Сравнительные материалы, полученные в ходе этносоциологического обследования населения Армянской ССР и Молдавской ССР, показывают, что в некоторых многонациональных поселениях— г. Кишинев и поселке городского типа Калинино (Армянская ССР) шкала дает некоторое отклонение. Это объясняется наличием этнических стереотипов у опрошенных (стереотип— стандартный образ представителя определенной национальности).

[14] Ю. Кахк, Черты сходства, Таллин, 1974; «Опыт этносоциологического изучения образа жизни», М., 1980.

[15] Л. М. Дробижева, Духовная общность народов СССР, М., 1981, с. 34.

[16] *Նույն տեղում, էջ 34—35։*